ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝
ԴՊՐՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍ I

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ
PH international
ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ՑԻԱԼԼԱ ԳԱԳՆԻՁԵ
ԼԻԱՆԱ ԿՈԲԵՍԱՇՎԻԼԻ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝ ԴՊՐՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍ I

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ
PH international
ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝
ԴՊՐՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝

ՑԻԱԼԼԱ ԳԱԳՆԻՁԵ
ԼԻԱՆՆԱ ԿՈԲԵՍԱՇՎԻԼԻ

ԴԻԶԱՅՆԵՐ՝

ԹԱՄԱՐ ՆԻԿՈԼԵԻՇՎԻԼԻ

ԽՄԲԱԳԻՐ՝

ՆԱԹԻԱ ՆԱՑՎԼԻՇՎԻԼԻ

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱԿԱ ԲԻԲԻԼԵԻՇՎԻԼԻ

2022 թվական

Ռեսուրսը պատրաստվել է ամերիկացի ժողովրդի աջակցությամբ և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության ջանքերի շնորհիվ: Տվյալ ռեսուրսում պարունակվող ինֆորմացիայի և նրանում արծարծվող տեսակետների միանձնյա պատասխանատուն ձեռնարկի հեղինակներն են: Ռեսուրսը չի ներկայացնում PH international-ի, Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության ու գիտության նախարարության աջակցությամբ, 2022-2027 թթ. PH International կազմակերպության կողմից Վրաստանում իրականացվում է USAID-ի քաղաքացիական կրթության ծրագիրը:

Ծրագրի նպատակն է դաստիարակել քաղաքացիական գործընթացներ ներգրավվող բարձր գիտակցությամբ երիտասարդ քաղաքացիների: Ծրագիրը նախատեսում է տեխնոլոգիաներ ներդնել քաղաքացիական կրթության ուսանում-ուսուցման գործընթացում, ինչպես նաև նպաստել դպրոցում ժողովրդավարական մշակույթի ներկրմանն ու բիզնեսի և դպրոցների միջև կապի ստեղծմանը:

Տվյալ ուղեցույցը պատրաստված է ծրագրի շրջանակներում և ընդգրկում է Աշակերտական ինքնակառավարման մարմնի գործունեությանն առնչվող հանձնարարականներ: Ռեսուրսը բաղկացած է երեք մասից.

- Առաջին մասում կծանոթանաք Աշակերտական ինքնակառավարման մարմնի անդամների համար նախատեսված ինքնակառավարման մարմինների դերի և գործունեության մասին տեղեկատվությանը:
- Երկրորդ մասը դպրոցի ղեկավարությանն օգնելու է Աշակերտական ինքնակառավարման մարմնի գործունեությանն աջակցելու հարցում:
- Երրորդ մասը նպատակ ունի հզորացնել Աշակերտների ինքնակառավարման մարմինները՝ կրթական ռեսուրս կենտրոնների հետ համագործակցության հեռանկարում:

Տվյալ ռեսուրսը հնարավորություն կընձեռի Աշակերտական ինքնակառավարման մարմնի անդամներին ճշգրիտ սահմանել սեփական դերն ու նշանակությունը դպրոցի կառուցվածքում[1]: Կօգնի ակտիվ ներգրավվել դպրոցական կյանք, մասնակցել դպրոցի համար կարևոր որոշումների կայացմանը, սեփական ներդրումն ունենալ դպրոցի ժողովրդավարական մշակույթի զարգացման գործընթացում:

[1] Գոգլիչիձե Ա., Մասնակցություն դպրոցի ինքնակառավարմանը, Աշակերտի գիրք, 2011թ,, էջ 24

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 1

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 2

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՓՈՐՁԸ 4

ՕՐԻՆԱԿ 1. «Աշակերտական ինքնակառավարումն ընդդեմ բռնության» 5

ՕՐԻՆԱԿ 2. «Դպրոցական կանոնակարգ և Աշակերտական ինքնակառավարում» 6

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆ ՈՒ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Աշակերտական ինքնակառավարումը[2] դպրոցի ժողովրդավարական կառավարման համակարգի բաղկացուցիչ սուբյեկտներից է: Այն ներկայացնում է դպրոցի աշակերտների ձայնը դպրոցի կառավարող օղակում: Կանոնադրությամբ սահմանված գործառույթների կիրառմամբ, Աշակերտական ինքնակառավարման մարմինն իր յուրաքանչյուր անդամին հնարավորություն է ընձեռում ձեռք բերել գործնական ունակություններ և գիտելիքներ, զինվել հմտություններով և զարգացնել ու մշակել ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացու վարքագիծը: Աշակերտների ինքնակառավարման անդամները պետք է ակտիվ ներգրավվեն հասարակական գործունեության մեջ, մասնավորապես՝ դպրոցում առկա խնդիրների և կարիքների բացահայտման և լուծման, դպրոցի աշակերտների գործունեությանն աջակցելու գործում, ինչն ինքնին կհարստացնի աշակերտների սոցիալական փորձը, կձևավորի քաղաքացիական համոզմունքները, ժողովրդավարական արժեքներն ու վարքագիծը:

Վրաստանում Աշակերտական ինքնակառավարման գաղափարը ծնվել է դպրոցական ինքնակառավարման իրավական կարգավորման մեկնարկից առաջ[3]: Դեռևս անցյալ դարասկզբին Դիմիտրի Ուզնաձեն գրում էր. «Դպրոցը փոքր պետություն է և այդ պետության քաղաքացիները նրա սաներն են: Ուրեմն, թող որ դպրոցը կազմակերպվի ժողովրդավարականորեն, թող որ, ըստ էության, նրա կառավարումը փոխանցվի աշակերտներին և կառավարման կենդանի փորձը դեռահաս ու աճող սերնդի մեջ կոփի քաղաքացիական բնավորությունը»[4]:

Արդեն 19-րդ դարում Ամերիկայում[5] աչքի էին ընկնում աշակերտներ, ովքեր սեփական ուսերին են վերցնում իրենց դպրոցների գործունեության համար պատասխանատվությունը: Նրանց, որպես Աշակերտական ինքնակառավարման/պետության ակտիվությունն աճեց XIX դարեվերջին և առավել զարգացավ XX դարեսկզբին:

---

2 Վրաստանի Կրթության և գիտության նախարարության հրաման №448 «Հանրակրթական ուսումնական հաստատությունները որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ ձևակերպելու և հանրային դպրոցների կանոնադրությունը հաստատելու մասին». 15 սեպտեմբերի, 2005 թվական

3 Վրաստանի օրենքը հանրային կրթության մասին. Գլուխ X. Հանրակրթական ուսումնական հաստատությունների Աշակերտական ինքնակառավարումը

4 Դ. Ուզնաձե, Հանրակրթական դպրոցի առաջադրանքներ, 1917 թ.

5 www.encyclopedia.com/children/encyclopedias-almanacs-transcripts-and-maps/student-government

Հոլանդացի մանկավարժներ Յանուշ Կոնչակը և Ալեքսանդր Կամինսկին (XX դար) գտնում էին, որ պատժի և խիստ դիսցիպլինայի (կարգապահության) փոխարեն, աշակերտներին պետք է տրվեր որոշումների կայացմանը ներազդելու իրավունք, որն իր հերթին կմեծացներ նրանց պատասխանատվության զգացումը:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Աշակերտական ինքնակառավարման մարմինը դպրոցի կառուցվածքային միավորների օղակներից մեկն է, որն ունի իր ընտրյալ ներկայացուցիչը Հոգաբարձուների խորհրդում (դպրոցի բարձրագույն ընտրովի մարմնում): Ըստ այդմ, Աշակերտական ինքնակառավարումն իր լիազոր ներկայացուցչի տեսքով ներգրավված է Հոգաբարձուների խորհրդի կողմից իրականացվող բոլոր գործողություններում:
Աշակերտական ինքնակառավարման մարմնի ճիշտ գործունեությունը նպաստում է դպրոցում ժողովրդավարական մշակույթի զարգացմանը, աշակերտների կողմից ժողովրդավարական արժեքների ճանաչմանը, պատասխանատվության գիտակցմանն ու ստանձնմանը, ինչն իր հերթին մեծացնում է որոշումների կայացման գործընթացում նրանց անկախ որոշումների կայացման վճռականությունը:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- Հոգաբարձուների խորհրդին առաջարկներ է ներկայացնում դպրոցի շահած դրամաշնորհը տնօրինելու վերաբերյալ
- մշակում է հանձնարարականներ դպրոցի ներքին կանոնակարգի վերաբերյալ
- անդամների մեկ հինգերորդի նախաձեռնությամբ ստեղծում է դպրոցական խմբակներ
- Հոգաբարձուների խորհրդին առաջարկներ է ներկայացնում դպրոցին հուզող կարևոր հարցերի շուրջ
- ընտրում է իր ներկայացուցչին Հոգաբարձուների խորհրդում և Կարգապահական հանձնաժողովում

Քանի որ Աշակերտական ինքնակառավարման մարմինն ունի իր ներկայացուցիչը Հոգաբարձուների խորհրդում, ինքնաբերաբար դառնում է դպրոցում տեղի ունեցող գործընթացների մասնակիցը, մասնավորապես՝ դպրոցական կրթական ծրագրի գնահատում, ֆինանսական և մարդկային/կադրային քաղաքականության կառավարում, զարգացման ապագա տեսլականի և նպատակների ձևավորում, դպրոցի ռազմավարական ծրագրի մշակում, դպրոցում անվտանգ միջավայրի ստեղծում:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Աշակերտական ինքնակառավարումը ստեղծվում է ընտրությունների անցկացման եղանակով և հանդիսանում է դասարանում սովորողների ազատ կամքի արտահայտման միջոցը: Ինքնակառավարման անդամներն իրենց ցուցակային կազմի մեծամասնությամբ ընտրում են համապատասխան մակարդակի ինքնակառավարման մարմնի նախագահի: Միջին մակարդակի ինքնակառավարման անդամները Հոգաբարձուների խորհրդի անդամ են ընտրում նույն ճանապարհով: Աշակերտական ինքնակառավարման մարմինը ղեկավարում է ինքնակառավարման անդամների կողմից ընտրված նախագահը:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ Է, ՈՐ ԱՅՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ[6] ԲՆՈՒՅԹ ԿՐԻ ԵՎ ՈՒՆԵՆԱ

- կանոնադրություն[7], առաքելություն, նպատակներ և գործողությունների ծրագիր
- նախապես գրված բյուջե, որը կներկայացվի դպրոցի բյուջեի պլանավորման ընթացքում
- դպրոցի բոլոր աշակերտներին տեղեկատվություն/ընդունված որոշումներ մատուցելու և հետադարձ կապ հաստատելու նպատակով՝ նախապես սահմանված կանոններ/ընթացակարգեր

6 Գոգլիչիձե Ա., Մասնակցություն դպրոցի ինքնակառավարմանը, Աշակերտի գիրք, էջ 74
7 Գոգլիչիձե Ա., Մասնակցություն դպրոցի ինքնակառավարմանը, Աշակերտի գիրք, էջ 75

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է

- ծանոթ լինեն դպրոցի կառուցվածքին և կառուցվածքային յուրաքանչյուր միավորի գործառույթ-պարտականությանը,
- արտահայտեն իրենց վերաբերմունքը դպրոցը կարգավորող փաստաթղթերի վերաբերյալ,
- հանդիպեն նախապես որոշված հաճախականությամբ, անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ,
- քննարկեն գործողությունների ծրագրով նախատեսված և/կամ անհրաժեշտության դեպքում նոր բացահայտվող խնդիրները,
- դպրոցական խնդիրների քննարկման ընթացքում խոսեն աշակերտների անունից,
- ներկայացնեն աշակերտների դիրքորոշումը, քննարկեն ուսումնա-դաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղիները,
- ուսումնասիրեն աշակերտների հետաքրքրություններն ու կարիքները և ստեղծեն պայմաններ դրանց իրացման համար,
- մասնակցեն դպրոցական խնդիրների բացահայտման և դրանց լուծման գործընթացին,
- ակտիվ շփում ծավալեն դպրոցի ղեկավարության հետ:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Ինչպես արդեն նշեցինք, դեռևս Ուզնաձեն[8] գտնում էր, որ հենց դպրոցում աշակերտները պետք է զարգացնեն այն իրավասությունները, որոնք պահանջում է ժողովրդավարական հասարակության քաղաքացու վարքագիծը: Նման փորձ ձեռք բերելու լավագույն միջոցներից մեկը դպրոցում աշակերտական ակտիվ ինքնակառավարումն է: Օրենսդրական կարգավորման համաձայն՝ Վրաստանի բոլոր դպրոցներում պետք է գործեն Աշակերտական ինքնակառավարման մարմիններ: Որոշ դպրոցներում վերջիններիս գործունեությունը հետաքրքիր փորձ է ձևավորում:

8 Ժողովրդավարականապես կազմակերպված պետությունը ձգտում է դաստիարակել ոչ միայն մարդ, այլև առաջին հերթին, քաղաքացի [...] Անվիճելի է, որ ժողովրդավարությունը շահագրգռված է կրթել գիտակից քաղաքացիների, ովքեր ունակ են ստեղծագործաբար միջամտելու պետության կյանքի զարգացման գործընթացին», Հանրակրթական դպրոցի առաջադրանքներ, 1917 թ.

ՕՐԻՆԱԿ 1

«ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԸՆԴԴԵՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ»

Խնդիր. Բռնության տարբեր ձևերից դպրոցում ամենատարածվածը՝ հոգեբանական բռնությունը, տհաճ և ոչ կառուցողական միջավայր է ստեղծում, ինչպես աշակերտների, այնպես էլ աշակերտների և ուսուցիչների միջև, ինչն իր հերթին ազդում է աշակերտների ակադեմիական նվաճումների վրա:

Նպատակ. Դպրոցական համայնքի ուշադրությունը կենտրոնացնելով դեռահասի զարգացման գործընթացում հոգեբանական բռնության բացասական ազդեցության վրա՝ նպաստել բռնության փաստերի նվազեցմանը:

Ակտիվություններ. Երբ ինքնակառավարումը տեղեկացավ աշակերտների՝ հոգեբանական բռնության դեպքերին առնչվող խնդիրներին, սկսեց աշխատել դրանց լուծման ուղիների մշակման ուղղությամբ: Այդ նպատակով հրավիրվեց ինքնակառավարման ժողով և քննարկում ծավալվեց ստեղծված իրավիճակի շուրջ, որի հիման վրա ծրագրվեցին և իրականացան հետևյալ ակտիվությունները.

- Աշակերտական ինքնակառավարման մարմինն օնլայն հարցաշարի կիրառմամբ իրականացրեց անանուն հարցում: Հարցման նպատակն էր ուսումնասիրել, թե դպրոցական համայնքի անդամները ՞ր գործողությունն են որակում իբրև բռնություն: Օնլայն հարցման մեջ տեղադրված էին գրաֆներ՝ «Գործողություն, որն ըստ ձեզ խտրականություն է պարունակում», «Բառեր/նախադասություններ, որոնք նվաստացուցիչ և վիրավորական են ձեզ համար», «Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը մականունների շուրջ» և այլն:
- Ստացված տեղեկության հիման վրա Աշակերտական ինքնակառավարումը պատրաստեց ձեռագործ և օնլայն պաստառներ, որոնց վրա զետեղեց աշակերտների համար անընդունելի բոլոր բառերը, նախադասությունները և արարքները: Ձեռագործ պաստառները տեղադրվեցին դպրոցի տարածքի հանրամատչելի և տեսանելի հատվածներում, իսկ օնլայն տարբերակը՝ դպրոցի ֆեյսբուքյան էջում:
- Դպրոցական միջավայրում Աշակերտական ինքնակառավարումը կազմակերպեց պատմվածքների մրցույթ: Ուսումնասիրության արդյունքներից ստացված տեղեկության հիման վրա շահագրգիռ աշակերտները գրեցին տարբեր պատմվածքներ: Նրանք փորձում էին արտացոլել այն զգացմունքներն ու վերաբերմունքը, որոնք զգացել և ունի բռնության զոհ դեռահասը:
- Լավագույն աշխատանքներն ընտրվեցին դպրոցական համայնքի մասնակցությամբ: Աշակերտական ինքնակառավարումը մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ, հրատարակեց պատմվածքների ժողովածու:

- Պատմվածքների ժողովածուի հիման վրա, բռնության կանխարգելման նպատակով, դասեր անցկացվեցին Քաղաքացիական կրթության, Վրացերենի և Օտար լեզուների ուսուցիչները:
- Ժողովածուի մի մասը բաժանվեց դպրոցում: Մնացած օրինակները պահվեցին դպրոցի գրադարանում և պարբերաբար օգտագործվեցին որպես ուսումնական գործընթացի ռեսուրս:
- Նախագծի շրջանակներում պատրաստված պատմվածքների ժողովածուի և պաստառների էլեկտրոնային տարբերակներն էլեկտրոնային փոստով ուղարկվեցին ծնողներին:

ԱՐԴՅՈՒՆՔ.

Ծրագրի իրականացման արդյունքում դպրոցական համայնքի անդամները վերլուծեցին և գիտակցեցին բռնության և խտրականության բացասական ազդեցությունը դեռահասների հոգեբանական վիճակի վրա, ինչը նվազեցրեց նշված փաստերը դպրոցում:

ՕՐԻՆԱԿ 2

«ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ և ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

Խնդիր. Աշակերտների շրջանում դպրոցի կանոնակարգի բովանդակության և կարևորության մասին տեղեկատվության պակասը կարգապահական բազմաթիվ խախտումների նախադրյալ է դառնում: Նույն այդ պատճառով, աշակերտների խրախուսման մեխանիզմները հաճախ արդյունավետ չեն կիրառվում:

Նպատակ. Աշակերտների կողմից դպրոցի ներքին կանոնակարգի կարևորության գիտակցումն ու նշված փաստաթղթի արդյունավետ գործարկման ապահովումը:

Ակտիվություններ. Ծրագրի շրջանակներում Աշակերտական ինքնակառավարման մարմնի կազմակերպմամբ և վարչակազմի համաձայնությամբ, մեկ ամսվա ընթացքում իրականացվեցին հետևյալ աշխատանքները.

Ինքնակառավարման մարմինը ծանոթացավ դպրոցի ներքին կանոնակարգին, վարչակազմի ներկայացուցիչներն օգնեցին աշակերտներին մշակել փաստաթղթի բովանդակությունը.

- ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչներն ըստ դասարանների, կատարեցին ուսումնասիրություն, թե՝ որքանո՞վ են աշակերտները տիրապետում դպրոցի ներքին կանոնակարգին և կազմեցին հաշվետվություն,

- ուսումնասիրությունից անմիջապես հետո, դպրոցի ներքին կանոնակարգի մասին տեղեկությունն ինքնակառավարման նախագահների միջոցով հասավ յուրաքանչյուր աշակերտին: Դասղեկների մասնակցությամբ դասարաններում կազմակերպվեց նշյալ փաստաթղթերի քննարկումը,
- դասարանները բաժանեցին այն օրերը, որոնց ընթացքում դիտարկել են, թե՝ որքանո՞վ է դպրոցական համայնքը պահպանում ներքին կանոնակարգի դրույթները (դասարաններում օրերի բաշխումն իրականացվում է այնպես, որ այս աշխատանքն ընդգրկում է մեկ ամիսն ամբողջությամբ: Յուրաքանչյուր դասարան դիտարկումն անցկացնում է մի քանի օրվա ընթացքում),
- հավաքված տվյալների հիման վրա, դասարանի ինքնակառավարման նախագահները պատրաստեցին հաշվետվություն: **Կարևոր է, որ կոնկրետ փաստեր դիտարկելիս որևէ անձի նույնականացում չէր իրականացվել, հետևաբար զեկույցն անձնական տվյալներ չէր պարունակում (անուն-ազգանունները չեն նշվում),**
- ինքնակառավարման մարմինը պատրաստեց և ներկայացրեց (դպրոցի տնօրենի առաջարկով Հոգաբարձուների խորհուրդը հաստատում է դպրոցի ներքին կանոնակարգը) շնորհանդես Հոգաբարձուների խորհրդի մասնակցությամբ, որը պարունակեց դիտորդական հաշվետվություն և ինքնակառավարման կողմից մշակված հանձնարարականներ՝ ներքին կանոնադրության վերաբերյալ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

Աշակերտները հիմնավորապես ծանոթացան փաստաթղթի հոդվածների բովանդակությանը: Նրանք գիտակցեցին դրա կարևորությունն ու դերը ուսումնական գործընթացում: Արդյունքում, փաստաթուղթն ուժի մեջ մտավ, ինչը հանգեցրեց կարգապահական իրավախախտումների կրճատմանն ու խրախուսման մեխանիզմների արդյունավետ գործարկմանը:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Աշակերտական ինքնակառավարման մարմիններ կարելի է տեսնել աշխարհի բազմաթիվ երկրներում: Նրանց փորձը բազմազան է և մեծապես կախված է այդ երկրներում ժողովրդավարության որակից, հենց իրենց՝ աշակերտների, քաղաքացիական ակտիվությունից, աշակերտների մեջ ժողովրդավարական արժեքներ զարգացնելու պետության պատրաս Որոշ երկրներում Աշակերտական ինքնակառավարումները հիմնված են դպրոցների բազայի վրա, իսկ մյուսներում՝ Աշակերտական ինքնակառավարման մարմինները դուրս են եկել դպրոցի սահմաններից, ստեղծել միավորումներ և գործում են ազգային մակարդակով, օրինակ.տակամությունից և կամքից:

- Էստոնիայի Աշակերտական խորհուրդների միությունը (հիմնադրվել է 1998 թվականին) ներկայումս միավորում է 90 000 աշակերտների՝ Էստոնիայի ողջ տարածքի ընդգրկվածությամբ: Միությունը համագործակցում է Էստոնիայի կրթության և հետազոտությունների նախարարության, Սոցիալական պաշտպանության նախարարության և տարբեր երիտասարդական կազմակերպությունների հետ՝ ինչպես Էստոնիայում, այնպես էլ՝ ամբողջ աշխարհում: Միությունն ամեն տարի կազմակերպում է առնվազն երեք լայնածավալ միջոցառում, այդ թվում՝ երկու համընդհանուր ժողով, որպեսզի միության անդամները արտահայտեն իրենց դիրքորոշումը տարածաշրջանային քաղաքականությանն առնչվող հարցերի հետ կապված, հաստատեն փաստաթղթերն ու ընտրեն խորհուրդ: Միությունը իրականացնում է նաև տարբեր նախագծեր: Աշակերտական ինքնակառավարման խորհրդում ստեղծվել են տարբեր հանձնաժողովներ՝ աշակերտների կողմից բարձրացված խնդրահարույց և/կամ նպատակային հարցերը քննարկելու համար, ուստի համապատասխան հարցերը քննարկվում են համապատասխան հանձնաժողովներում:

- Ամերիկայի Միացյալ Նահանգների աշակերտական կառավարությունների հիմնական կառուցվածքը, որի հիման վրա իրականացվում է աշակերտական կառավարությունների մոդելավորումը, հիմնված է ԱՄՆ կառավարության մոդելի վրա: Այն բաղկացած է երեք ճյուղերից՝ գործադիր, օրենսդիր և դատական: Այս ճյուղերն աշխատում են միասին, որպեսզի ապահովեն ուժերի հավասարակշռությունը Աշակերտական կառավարությունում:

- Սերբիայում՝ Վրանե քաղաքում, Իվան Իվանովիչի անվան դպրոցի սաների համար ամենակարևոր խնդիրը խցանված երթևեկությունն էր, որը սպառնում էր դպրոցականների անվտանգությանը: Նրանք եզրահանգեցին, որ այս խնդրի լուծման լավագույն տարբերակը դպրոցի հարակից ճանապարհներին լուսացույցների տեղադրումն է: Աջակցություն և համապատասխան օգնություն ստանալու համար՝ որպես պոտենցիալ ֆինանսավորողի, հանդիպումներ անցկացրեցին ճանապարհային ոստիկանության, շինարարության ոլորտի տնօրինության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջազգային կազմակերպության ներկայացուցիչների հետ: Լայն հանրությանը իրազեկելու և խնդիրը բարձրաձայնելու նպատակով աշակերտները դիմեցին լրատվամիջոցներին և ճանապարհային ոստիկանության ու շինարարության ոլորտի տնօրինության ներկայացուցիչների հետ հանրությանը ներկայացան տեղական հեռուստաալիքի եթերով: Աշակերտների ջանքերի արդյունքը դարձավ Վրանե քաղաքի բոլոր դպրոցների և մանկապարտեզների մոտ ճանապարհային լուսացույցների տեղադրումը:[9]

9 Բեկմեն. Է, Թրաֆորդ. Բ. Դպրոցների ժողովրդավարական կառավարումը, էջ 81

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝
ԴՊՐՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍ 2

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ
PH international
ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ՑԻԱԼԱ ԳԱԳՆԻՁԵ
ԼԻԱՆԱ ԿՈԲԵՍԱՇՎԻԼԻ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝ ԴՊՐՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍ II

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ
PH international
ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝
ԴՊՐՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
ՑԻԱԼԼԱ ԳԱԳՆԻՁԵ
ԼԻԱՆՆԱ ԿՈԲԵՍԱՇՎԻԼԻ

ԴԻԶԱՅՆԵՐ՝
ԹԱՄԱՐ ՆԻԿՈԼԵԻՇՎԻԼԻ

ԽՄԲԱԳԻՐ՝
ՆԱԹԻԱ ՆԱՑՎԼԻՇՎԻԼԻ

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՄԱԿԱ ԲԻԲԻԼԵԻՇՎԻԼԻ

2022 թվական

Ռեսուրսը պատրաստվել է ամերիկացի ժողովրդի աջակցությամբ և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության ջանքերի շնորհիվ: Տվյալ ռեսուրսում պարունակվող ինֆորմացիայի և նրանում արծարծվող տեսակետների միանձնյա պատասխանատուն ձեռնարկի հեղինակներն են: Ռեսուրսը չի ներկայացնում PH international-ի, Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության ու գիտության նախարարության աջակցությամբ, 2022-2027 թթ. PH International կազմակերպության կողմից Վրաստանում իրականացվում է USAID-ի քաղաքացիական կրթության ծրագիրը:

Ծրագրի նպատակն է դաստիարակել քաղաքացիական գործընթացներ ներգրավվող բարձր գիտակցությամբ երիտասարդ քաղաքացիների: Ծրագիրը նախատեսում է տեխնոլոգիաներ ներդնել քաղաքացիական կրթության ուսանում-ուսուցման գործընթացում, ինչպես նաև նպաստել դպրոցում ժողովրդավարական մշակույթի ներկրմանն ու բիզնեսի և դպրոցների միջև կապի ստեղծմանը:

Տվյալ ուղեցույցը պատրաստված է ծրագրի շրջանակներում և ընդգրկում է Աշակերտական ինքնակառավարման մարմնի գործունեությանն առնչվող հանձնարարականներ: Ռեսուրսը բաղկացած է երեք մասից.

- Առաջին մասում կծանոթանաք Աշակերտական ինքնակառավարման մարմնի անդամների համար նախատեսված ինքնակառավարման մարմինների դերի և գործունեության մասին տեղեկատվությանը:
- Երկրորդ մասը դպրոցի ղեկավարությանն օգնելու է Աշակերտական ինքնակառավարման մարմնի գործունեությանն աջակցելու հարցում:
- Երրորդ մասը նպատակ ունի հզորացնել Աշակերտների ինքնակառավարման մարմինները՝ կրթական ռեսուրս կենտրոնների հետ համագործակցության հեռանկարում:

Տվյալ ռեսուրսը հնարավորություն կընձեռի Աշակերտական ինքնակառավարման մարմնի անդամներին ճշգրիտ սահմանել սեփական դերն ու նշանակությունը դպրոցի կառուցվածքում[1]: Կօգնի ակտիվ ներգրավվել դպրոցական կյանք, մասնակցել դպրոցի համար կարևոր որոշումների կայացմանը, սեփական ներդրումն ունենալ դպրոցի ժողովրդավարական մշակույթի զարգացման գործընթացում:

[1] Գոգլիչիձե Ա., Մասնակցություն դպրոցի ինքնակառավարմանը, Աշակերտի գիրք, 2011թ,, էջ 24

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշակերտական ինքնակառավարման դերն ու նշանակությունը դպրոցի կառուցվածքում 1

Դպրոցի տնօրինությունը՝ Աշակերտական ինքնակառավարման մարմնի գործունեության աջակից 2

Աշակերտական ինքնակառավարման մարմնի համագործակցությունը դպրոցական այլ միավորների հետ 4

ՕՐԻՆԱԿ 1 Աշակերտական ինքնակառավարման մարմնի ակտիվացման խթանում 5

ՕՐԻՆԱԿ 2 Դպրոցական ենթակառուցվածքների հանդեպ հոգատարություն 6

ՕՐԻՆԱԿ 3 «Դպրոցական հեռուստատեսություն» 7

Ո՞րն է տարբերությունը քաղաքացիական կրթության ակումբի և Աշակերտական ինքնակառավարման կողմից ծրագրված և իրականացվող նախագծերի միջև 4

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Աշակերտական ինքնակառավարումն իբրև աշակերտների ընտրյալ մարմին, Հոգաբարձուների խորհրդում իր լիազոր ներկայացուցչի միջոցով մասնակցում է դպրոցի կառավարման գործընթացին: Ժողովրդավարական կառավարման այս հնարավորությունը պահանջում է դպրոցի ղեկավարության և Աշակերտական ինքնակառավարման ակտիվ համագործակցությունը: Դպրոցի տնօրինությունը, որն իրականացնում է Հոգաբարձուների խորհրդի որոշումները, ղեկավարում է դպրոցը, իրականացնում է դպրոցի կառավարման հետ կապված ընթացակարգեր, ապահովում դպրոցի գործունեության բարձր չափանիշներն ու վճռորոշ դեր խաղում Աշակերտական ինքնակառավարման հաջողված գործընթացում:

Հաջողակ բոլոր տնօրենները գիտեն, որ դպրոցի՝ որպես հաստատության, հզորանալու նախապայմաններից մեկը, ուժեղ և գործուն ինքնակառավարման մարմնի գոյությունն է: Իսկ սա հնարավոր է, երբ.

- դպրոցի կառավարման համակարգը ժողովրդավարական է,
- դպրոցում տեղի ունեցող գործընթացները թափանցիկ են, դպրոցի ղեկավար օղակների միջև գործառույթները բաշխված են, շփումը պարզ և մատչելի է,
- դպրոցում ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները դպրոցական կյանքին և դպրոցի շահերին վերաբերող որոշումների կայացման գործընթացում աշակերտների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար:
- Ի՞նչ պետք է ընդգրկի Աշակերտական ինքնակառավարման և դպրոցի ղեկավարության համագործակցությունը: Առաջին հերթին Աշակերտական ինքնակառավարումը և դպրոցի տնօրինությունը պետք է համատեղ ջանքերով նպաստեն դպրոցում ժողովրդավարական մշակույթի հաստատմանը: Դպրոցում ժողովրդավարական մշակույթ հաստատելու համար անհրաժեշտ է.
- ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կպաշտպանվեն դպրոցական համայնքի իրավունքները, նպաստավոր պայմաններ կստեղծվեն աշակերտների քաղաքացիական գործունեության համար,
- դպրոցական համայնքի հետ վարել տեղեկատվական արշավ դպրոցի կառավարչական մարմնի դերի, գործառույթի և նշանակության վերաբերյալ,
- ստեղծել տարակարծության նպաստավոր միջավայր,
- ստեղծել նպաստավոր պայմաններ դպրոցական համայնքի յուրաքանչյուր անդամի անձնական, սոցիալական և մասնագիտական իրացման համար,

- ներդպրոցական բոլոր գործընթացները պետք է հիմնված լինեն երկխոսության և փոխադարձ հարգանքի վրա,
- աջակցել աշակերտների ներգրավվածությանը որոշումների կայացման և դպրոցի ինքնագնահատման գործընթացում,
- իրավասությունների սահմաններում աշակերտներին հնարավորություն տալ մասնակցել բացահայտված խնդրի լուծմանը,
- դպրոցական ինքնակառավարման մարմինների կազմավորման գործընթացում նպաստել ժողովրդավարական ընտրությունների սկզբունքների հաստատմանը,
- առավելագույնս օգտագործել դպրոցի կազմակերպչական ինքնավարության իրավունքը,
- ստեղծել խոսքի ազատության իրացման հնարավորություններ/կարծիք արտահայտելու միջոցներ[10],
- ձևավորել «բաց դպրոց», որը պատրաստ կլինի լսել աշակերտներին, խրախուսել նրանց նախաձեռնությունները և ստեղծել անվտանգ միջավայր այդ նախաձեռնություններն իրականացնելու համար:

Այսպիսով, Աշակերտական ինքնակառավարման մարմինն ու դպրոցի տնօրինությունը փոխադարձ և համաձայնեցված համագործակցությամբ պետք է նպաստեն աշակերտների ակտիվացմանը, մեծ ակնկալիքներ և հույսեր տածեն, միասին մշակեն դպրոցի ռազմավարական նպատակներն ու խնդիրները, գնահատեն դպրոցում առկա գործընթացները, սահմանեն առաջնահերթությունները և ապահովեն առկա չափանիշների ձեռքբերումը: Նրանք պետք է կառավարեն դպրոցը ընդհանուր տեսլականով և ուղղություններով:

Աշակերտական ինքնակառավարման մարմինը պետք է ներգրավվի դպրոցի զարգացման ծրագրի մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացում:

10(դպրոցի կայք-էջի, սոցիալական ցանցերի, դպրոցական մեդիա-ռեսուրսների միջոցով և այլն)

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՋԱԿԻՑ

Աշակերտը պետք է սովորի ժողովրդավարության սկզբունքներն ու դրանք գործնականում կիրառի դպրոցական կյանքում: «Ժողովրդավարական դպրոցը» ենթադրում է, որ դպրոցի կառավարումը պետք է հիմնված լինի մարդու իրավունքների արժեքների առկայության, աշակերտներին, դպրոցում աշխատող և շահագրգիռ բոլոր կողմերին անհրաժեշտ ռեսուրսով ապահովման ու դպրոցի շրջանակներում ընթացող որոշումների ընդունման գործընթացում նրանց մասնակցության վրա[11]»: Աշակերտական ինքնակառավարման մարմնին տնօրինության ցուցաբերած ակտիվ աջակցությունը՝ նպաստում է դպրոցում տվյալ մարմնի արդյունավետ և շահավետ աշխատանքին, որն իր հերթին արտացոլում է ժողովրդավարական մշակույթը:

Ինչպիսի՞ գործընթացներ են ընթանում դպրոցում, որտեղ արդյունավետ է իրականացվում Աշակերտական ինքնակառավարման մարմնի աշխատանքը.

- Աշակերտների շահերը քննարկելու նպատակով Աշակերտական ինքնակառավարման և տնօրինության միջև պարբերական հանդիպումներ են անցկացվում,
- դպրոցում ձևավորվում է համագործակցային միջավայր և նպաստավոր պայմաններ՝ խմբային պատասխանատվության զարգացման, նախաձեռնությունների խրախուսման համար,
- տնօրինությունն իր գործուն վստահությունն է հայտնում աշակերտներին,
- նպաստավոր պայմաններ են ստեղծվում աշակերտների շրջանում իրավիճակային առաջնորդների բացահայտման ու վերջիններիս հմտությունները զարգացնելու համար,
- աշակերտներն իրենց լիազորությունների շրջանակներում մասնակցում են դպրոցի կառավարման գործընթացներին: Խրախուսվում է ժողովրդավարական կառավարումը դպրոցում,
- աշակերտները պլանավորում և կատարում են հետազոտություններ իրենց հետաքրքրող հարցերի շուրջ, արձանագրում են խնդիրներն ու ուրվագծում լուծման ուղիները,

11 Բեկմեն. Է, Թրաֆորդ. Բ. Դպրոցների ժողովրդավարական կառավարումը, էջ 10

- Աշակերտական ինքնակառավարման մարմնի կողմից ծրագրված բյուջեն նախատեսվում է դպրոցի բյուջեն կազմելիս,
- աշակերտների հետ միասին քննարկվում են հանրային բոլոր փաստաթղթերը, որոնք օգտագործվում են դպրոցի կառավարման մակարդակում, հաշվի են առնվում աշակերտների կառուցողական արձագանքները.
- աշակերտները մասնակցում են դպրոցի ինքնագնահատման աշխատանքային խմբի աշխատանքներին,
- դպրոցի տնօրինության նախաձեռնությամբ և աջակցությամբ աշակերտները հնարավորություն ունեն սովորել, թե ինչպես գրել նախագիծ և ղեկավարել այն:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՅԼ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Երբ խոսում ենք դպրոցում գոյություն ունեցող ժողովրդավարական կառավարման մասին, նշանակում է, որ դպրոցում առկա են կառուցվածքային միավորներ, որոնք ունեն յուրօրինակ ներքին ինքնավարություն: Նրանք կարող են ունենալ տարբեր/այլընտրանքային տեսակետներ ընթացիկ գործընթացների վերաբերյալ, որոնք հիմնավորում և առաջարկում են քննարկման: Կարող են արտահայտել և պաշտպանել իրենց հետաքրքրությունները: Մեր դեպքում՝ Աշակերտական ինքնակառավարման մարմինը, ելնելով իր գործառույթներից, համագործակցում է դպրոցի տնօրինության, առարկայական ամբիոնների, մանկավարժական խորհրդի, կարգապահական կոմիտեի հետ, իսկ դպրոցի Հոգաբարձուների խորհրդի հետ միասին մասնակցում դպրոցի կառավարմանը: Դպրոցի կառավարման մեջ Աշակերտական ինքնակառավարման մասնակցությունն արտահայտվում է որոշումների կայացման գործընթացում ակտիվ ներգրավվածությամբ (նկատառվում են դպրոցում սովորողները), փաստարկված, թեկուզ և ընդհանուր կարծիքից տարբերվող սեփական դիրքորոշման արտահայտմամբ և պաշտպանությամբ: Աշակերտական ինքնակառավարման համագործակցությունը դպրոցի տնօրինության հետ արտահայտվում է աշակերտների կողմից դպրոցի խնդիրների բացահայտման և լուծման ուղիների նախանշման, դրանք լուծելու մեջ ակտիվ մասնակցության, տնօրինության հետ դպրոցի կարիքների ուսումնասիրման և ուսումնական գործընթացի, դպրոցական ուսումնական ծրագրի, դպրոցում առկա միջավայրի անվտանգության գնահատման, հանձնարարականների մշակման և ներկայացման մեջ:

Աշակերտական ինքնակառավարման մարմինը, բնականաբար, կարող է մի կողմից կիսել իր դրական գործնական փորձը այլ դպրոցների ինքնակառավարման մարմինների հետ, մյուս կողմից՝ լսել այլ ինքնակառավարման մարմինների կատարած աշխատանքի մասին տեղեկությունն ու մշակել՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով սեփական խնդիրները լուծելիս:

Ստորև ներկայացված են Աշակերտական ինքնակառավարման գործունեությանն աջակցող դպրոցի տնօրինության գործնական օրինակները:

ՕՐԻՆԱԿ 1

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Խնդիր. Դպրոցը, որի աշակերտները աչքի չէին ընկնում նախաձեռնություններով և ակտիվություններով, որոշեց ստեղծել մեխանիզմներ՝ դպրոցական/համայնքային կյանք աշակերտներին ներգրավելու համար:

Նպատակ. Աշակերտների նախագծերի և նախաձեռնությունների իրականացմանն աջակցելու համար ստեղծեց աշակերտական պորտֆոլիոներ (թղթապանակներ):

Ակտիվություններ.

- Դպրոցի տնօրինությունը, Հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ, հատկացրեց բյուջե աշակերտների ինքնակառավարման ծրագրերին:
- Մրցութային կարգով դպրոցում աշխատանքի ընդունեց մասնագետի, ով օգնեց աշակերտներին նշված նախագծերի պլանավորման և իրականացման հարցում:
- Դպրոցում պարբերաբար հայտարարվեցին դրամաշնորհային մրցույթներ՝ ինքնակառավարման մարմնի նախաձեռնությունների և նախագծերի իրականացման համար: Միաժամանակ, առանց մրցույթի ևս, աշակերտները կարող էին նախագծեր կազմել և դիմել վարչակազմին՝ իրականացնելու թույլտվություն ստանալու համար:
- Մշակվեց սխեմա, ըստ որի իրականացվեցին ինքնակառավարման մարմնի պատրաստած և դպրոցի կողմից ընտրված նախագծերի ֆինանսավորումը, գնումների իրականացումը և հաշվետվությունների կազմումը:

Իրականացվեց նախագծային բոլոր այն հայտերի արձանագրումն ու դպրոցի էլեկտրոնային համակարգ ներբեռնումը, որոնք մուտք են գործել տնօրինություն՝ ֆինանսավորում կամ իրականացման թույլտվություն ստանալու նպատակով: Հայտում գրանցվեցին բոլոր այն աշակերտների անուն-ազգանունները, ովքեր ներգրավված էին նախագծում կամ նախաձեռնություններում:

Աշակերտների պորտֆոլիոների ստեղծումը խթանեց նախաձեռնությունների մտահղացումն ու անհրաժեշտության դեպքում իրականացումը՝ ծառայելով աշակերտների լավագույն նպատակներին:

Արդյունք. Աջակից անձի աշխատանքի ընդունումը, նախագծերի իրականացման աջակցությունը, բյուջեի հատկացումը և աշակերտների պորտֆոլիոներում իրականացված գործունեության մասին փաստաթղթերի առկայությունը, նպաստեց ինքնակառավարման և դպրոցում գոյություն ունեցող ակումբների գործունեության արդյունավետ կառավարմանը:

ՕՐԻՆԱԿ 2

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդիր. Վարչության կողմից դասասենյակներն ու դպրոցական այլ հատվածները կոկիկ պահելու ջանքերին հակառակ, հարցն իր ճիշտ լուծումը հաճախ չի գտնում: Ցավոք, որոշ աշակերտներ չեն գիտակցում իրենց պատասխանատվությունն ու վնասում են դպրոցական գույքը:

Նպատակ. Ստեղծվեցին դպրոցական միջավայրի նկատմամբ հոգատարության և պատասխանատվության զարգացմանը նպաստող պայմաններ՝ խրախուսման մեխանիզմի ներդրմամբ:

Ակտիվություններ. Համագործակցելով Աշակերտական ինքնակառավարման հետ, դպրոցի տնօրինությունը դասարանների միջև մրցույթ կազմակերպեց: Մրցույթի էությունը հետևյալն էր. դասի համար հատկացված սենյակը պետք է կոկիկ տեսք ունենար ամբողջ կիսամյակի ընթացքում: Յուրաքանչյուր դասարան կարող էր իր ներդրումն ունենալ սենյակի կարգավորման մեջ: Մրցույթի շրջանակներում աշակերտները հնարավորություն ունեցան համագործակցելու պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ:

- Աշակերտական ինքնակառավարումը հավաքագրեց խմբեր, որոնք իրականացնում էին պարբերական մոնիտորինգ: Խմբերի անդամները ոչ միայն աշակերտներ, այլ նաև ուսուցիչներ էին:

- Կիսամյակի վերջում բացահայտվեց հաղթող դասարանը, իսկ դպրոցի տնօրինությունը մասնավոր հատվածի հետ համագործակցելով ֆինանսավորեց դպրոցականների էքսկուրսիան:

Արդյունք. Աշակերտների մոտ ձևավորվեց պատասխանատվություն և հոգատարություն դպրոցական միջավայրի հանդեպ: Բարեկարգվեցին դպրոցի ենթակառուցվածքները, կրճատվեցին վերանորոգչական աշխատանքների ծախսերը:

ՕՐԻՆԱԿ 3

«ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

Խնդիր. Դպրոցական կյանքի և այստեղ ընթացող կարևոր խնդիրների մասին տեղեկատվությունը պակաս հասանելի էր դպրոցական համայնքին: Խնդիրը արդիական դարձավ հատկապես համավարակի ժամանակ.

Նպատակ. Հանրային իրազեկման և դպրոցական ժողովրդավարության զարգացման խթանում:

Ակտիվություններ. Դպրոցի տնօրինության նախաձեռնությամբ և Աշակերտական ինքնակառավարման մարմնի համագործակցությամբ ֆեյսբուքյան հատուկ էջում ստեղծվեց դպրոցական հեռուստատեսություն, որը գործեց շաբաթը մեկ հաճախականությամբ:

- Աշակերտական ինքնակառավարումը մրցույթ հայտարարեց հեռուստատեսային խորագրերի թեմայով:

- Ստեղծվեց տեխնիկական խումբ, որը հոգաց հաղորդումների և տեսապատմությունների մոնտաժը: Աշակերտների շարքերում ընտրվեցին հաղորդավարներ, ովքեր նախապես ներկայացրեցին իրենց ծրագրերն ու տեսլականները:

- Դպրոցի տնօրինությունը հոգաց անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերումը: Կադրեր հատկացրեց աշակերտական հեռուստատեսության անվտանգ և որակյալ աշխատանքը ղեկավարելու և աջակցելու համար:

- Կարևոր են խորագրերի թեմաները. դրանք սովորաբար վերաբերում են ոչ ֆորմալ տեսանկյունից դպրոցի մանկավարժների ճանաչմանը՝ նրանց հետաքրքրությունների, որակների և տեսակետների նկարագրությանը, ինչպես նաև հաջողակ շրջանավարտների պատմություններին, որոնք իրենց գրանցած հաջողություններով կարող են խրախուսողի դեր խաղալ դպրոցում սովորող աշակերտների համար: Տեսանյութերը կարող են բովանդակել դպրոցի նորություններն ու ընթացիկ հնարավորությունները, ինչպես նաև առկա խնդիրները, դրանց լուծման ուղիների քննարկումը և այլն:

Արդյունք. Բարձրացավ դպրոցական համայնքի իրազեկման որակը: Աշակերտներն ուսուցիչներին ճանաչեցին նաև այլ տեսանկյունից, ինչը դրական ազդեցություն ունեցավ նրանց հարաբերությունների վրա՝ բարձրացավ դպրոցի նկատմամբ հետաքրքրությունն ու այլ դպրոցների աշակերտները նույնպես սկսեցին գործել դպրոցական հեռուստատեսություն ստեղծելու ուղղությամբ: Մյուս կողմից, հեռուստատեսությունը հնարավորություն ստեղծեց, որպեսզի ղեկավարությունն ավելի լավ տեսնի աշակերտների հետաքրքրություններն ու վերաբերմունքը դպրոցի նկատմամբ, ինչն իր հերթին մեծացրեց զարգացման հեռանկարը:

Ո՞ՐՆ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲԻ և ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐՎԱԾ և ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԻՋև:

Աշակերտական ինքնակառավարման և ակումբների գործունեությունը դպրոցում շատ նման է երկրի ներսում գործող կառավարական և հասարակական կազմակերպությունների գործունեությանը:

Աշակերտական ինքնակառավարման՝ որպես դպրոցի կառուցվածքային միավորի, գործառույթը կարգավորվում է օրենքով: Նրա կողմից իրականացվող նախագծերն ամբողջությամբ կապված են դպրոցի հետ: Ինքնակառավարման նախաձեռնությունները և նախագծերը բխում են դպրոցի պահանջներից և ուղղակիորեն կողմնորոշված են օրենքով սահմանված իրավունքների ու պարտականությունների պաշտպանությանն ու այդ շրջանակներում խնդիրների լուծմանը (տես Աշակերտական ինքնակառավարման տեղական փորձի օրինակները):

Ակումբային նախագծերը պլանավորվում են ակումբի անդամների կողմից՝ ելնելով աշակերտների և հասարակության շահերից և ծառայում են աշակերտների աչքով տեսած խնդիրների լուծմանը, ինչպիսին է, օրինակ՝ իրազեկվածության ցածր մակարդակը հետևյալ թեմաների շուրջ. շրջակա միջավայրի պաշտպանություն, առողջ ապրելակերպ, բազմազանության ընդունում, խտրականություն, ակումբի անդամների կողմից մաքրման, կանաչապատման ակցիաների կազմակերպում և այլն:

Հարկավոր չէ մտածել, որ Աշակերտական ինքնակառավարման մարմնի և քաղաքացիական կրթության ակումբի կողմից իրականացվող նախագծերը կտրուկ տարանջատվում են և վերջիններիս համագործակցությունը չի կայանում: Ընդհակառակը, դպրոցի այս երկու օղակները միասնաբար կարևոր դեր են խաղում դպրոցական ժողովրդավարության և, ընդհանրապես, դպրոցի զարգացման գործընթացներում: Օրինակ՝ դպրոցի ենթակառուցվածքների (և ոչ միայն) հետ կապված խնդիրների պաշտպանություն և վերահսկում, դպրոցի մոտ հետիոտնային անցումների տեղակայում և այլն:

Ե'վ ակումբների, և' ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչները, ըստ անհրաժեշտության, ծրագրի իրականացման գործընթացում համագործակցում են տեղական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝ ԴՊՐՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍ 3

ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ
PH international ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ՑԻԱԼԱ ԳԱԳՆԻՁԵ
ԼԻԱՆԱ ԿՈԲԵՍԱՇՎԻԼԻ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝ ԴՊՐՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍ III

ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ
PH international
ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝
ԴՊՐՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝

ՑԻԱԼԼԱ ԳԱԳՆԻՁԵ
ԼԻԱՆՆԱ ԿՈԲԵՍԱՇՎԻԼԻ

ԴԻԶԱՅՆԵՐ՝

ԹԱՄԱՐ ՆԻԿՈԼԵԻՇՎԻԼԻ

ԽՄԲԱԳԻՐ՝

ՆԱԹԻԱ ՆԱՑՎԼԻՇՎԻԼԻ

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱԿԱ ԲԻԲԻԼԵԻՇՎԻԼԻ

2022 թվական

Ռեսուրսը պատրաստվել է ամերիկացի ժողովրդի աջակցությամբ և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության ջանքերի շնորհիվ: Տվյալ ռեսուրսում պարունակվող ինֆորմացիայի և նրանում արծարծվող տեսակետների միանձնյա պատասխանատուն ձեռնարկի հեղինակներն են: Ռեսուրսը չի ներկայացնում PH international-ի, Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության ու գիտության նախարարության աջակցությամբ, 2022-2027 թթ. PH International կազմակերպության կողմից Վրաստանում իրականացվում է USAID-ի քաղաքացիական կրթության ծրագիրը:

Ծրագրի նպատակն է դաստիարակել քաղաքացիական գործընթացներ ներգրավվող բարձր գիտակցությամբ երիտասարդ քաղաքացիների: Ծրագիրը նախատեսում է տեխնոլոգիաներ ներդնել քաղաքացիական կրթության ուսանում-ուսուցման գործընթացում, ինչպես նաև նպաստել դպրոցում ժողովրդավարական մշակույթի ներկրմանն ու բիզնեսի և դպրոցների միջև կապի ստեղծմանը:

Տվյալ ուղեցույցը պատրաստված է ծրագրի շրջանակներում և ընդգրկում է Աշակերտական ինքնակառավարման մարմնի գործունեությանն առնչվող հանձնարարականներ: Ռեսուրսը բաղկացած է երեք մասից.

- Առաջին մասում կծանոթանաք Աշակերտական ինքնակառավարման մարմնի անդամների համար նախատեսված ինքնակառավարման մարմինների դերի և գործունեության մասին տեղեկատվությանը:
- Երկրորդ մասը դպրոցի ղեկավարությանն օգնելու է Աշակերտական ինքնակառավարման մարմնի գործունեությանն աջակցելու հարցում:
- Երրորդ մասը նպատակ ունի հզորացնել Աշակերտների ինքնակառավարման մարմինները՝ կրթական ռեսուրս կենտրոնների հետ համագործակցության հեռանկարում:

Տվյալ ռեսուրսը հնարավորություն կընձեռի Աշակերտական ինքնակառավարման մարմնի անդամներին ճշգրիտ սահմանել սեփական դերն ու նշանակությունը դպրոցի կառուցվածքում[1]: Կօգնի ակտիվ ներգրավվել դպրոցական կյանք, մասնակցել դպրոցի համար կարևոր որոշումների կայացմանը, սեփական ներդրումն ունենալ դպրոցի ժողովրդավարական մշակույթի զարգացման գործընթացում:

[1] Գոգլիչիձե Ա., Մասնակցություն դպրոցի ինքնակառավարմանը, Աշակերտի գիրք, 2011թ,, էջ 24

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Կրթական ռեսուրս կենտրոնն ու Աշակերտական ինքնակառավարումը 1

ՕՐԻՆԱԿ 1 «Աշակերտական ինքնակառավարումներն ընդդեմ բռնության» 3

ՕՐԻՆԱԿ 2 «Ռեսուրս կենտրոնը՝ Աշակերտական ինքնակառավարման նախաձեռնությունների աջակից» 5

ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ուղեցույցի այս մասում մենք կքննարկենք կրթական ռեսուրս կենտրոնի դերը Աշակերտական ինքնակառավարման մարմնի արդյունավետ և շահավետ գործունեության հեռանկարում: Ինչպես նաև ռեսուրսների ներգրավման, նախագծերի իրականացման նպատակով Աշակերտների ինքնակառավարման և ռեսուրս կենտրոնի տարբեր գերատեսչությունների հետ համագործակցությունը՝ մունիցիպալ, շրջանային կամ ազգային մակարդակով: Միաժամանակ կներկայացնենք այս ուղղությամբ իրականացված բարեհաջող օրինակներ:

Քանի որ ուղեցույցի նպատակն է աշակերտների մեջ ժողովրդավարական արժեքների ձևավորումն ու ակտիվ քաղաքացու հմտությունների զարգացումը դպրոցական ինքնակառավարմանը մասնակցելու ճանապարհով, կարևոր է, որպեսզի Աշակերտական ինքնակառավարման մարմինները միմյանց հետ համագործակցելով, գիտակցեն այն իրավունքները, պատասխանատվությունն ու պարտականությունները, որոնք կարող են դուրս գալ դպրոցի շրջանակից: Կարևոր է, որ Աշակերտական ինքնակառավարումն ունենա մունիցիպալ մակարդակով որոշումների կայացման հնարավորություն, որպեսզի հետագայում համագործակցելով տարբեր կառույցային միավորների հետ ցուցաբերի ակտիվ ներգրավվածություն և գիտակցված մասնակցություն հասարակական կյանքում՝ խնդրի լուծման շուրջ կազմելով մեկ թիմ և մասնակցելով երկրի կառավարմանն ու կարևոր որոշումների կայացմանը:

Ուղեցույցում ներկայացված նյութը կօգնի Աշակերտական ինքնակառավարմանն առավել արժևորել և կարևորել կրթական ռեսուրս կենտրոնի հետ համագործակցությունը, ինչպես նաև Աշակերտական ինքնակառավարման գործունեության հնարավոր բազմազանությունը: Ներկայացված նյութը հիմնված է Վրաստանի դպրոցներում Աշակերտական ինքնակառավարման գործնական օրինակների վրա:

Վրաստանի կրթության և գիտության նախարարության տարածքային մարմինների կրթական ռեսուրս կենտրոնների դրույթի մեջ, ռեսուրս կենտրոնի նպատակն է իրականացնել կրթության և գիտության նախարարության քաղաքականությունը: Նույն դրույթի հիմնական գործառույթներում, ի թիվս այլ գործառույթների, ռեսուրս կենտրոնը տեսնում ենք, որպես.

- աջակից՝ դպրոցում ուսումնական գործընթացը ազգային ուսումնական պլանին համապատասխան վարելիս (այս տեսանկյունից Աշակերտական ինքնակառավարումը կարող է օգնել ռեսուրս կենտրոններին որպես տեղում իրականացվող գործընթացների գնահատող՝ խնդիրներն ու կարիքները առավել հստակ բացահայտելու և այդ խնդիրների լուծման ուղիները գտնելու հարցում),

- որպես նպաստող՝
  - ուսումնական միջավայրի ապահովման, կրթական-դաստիարակչական և այլ ծրագրերի ու նախագծերի իրականացման գործում,
  - իր գործունեության տարածքում գոյություն ունեցող հանրային դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման համակարգի ներդրման և ամրապնդման գործում,
  - հանրակրթական հաստատությունների միջև համագործակցության մեջ, ինչպես առարկայական, այնպես էլ՝ դպրոցի կառավարման ուղղությամբ:

Ռեսուրս կենտրոնը, որպես Աշակերտական ինքնակառավարման մարմինների համագործակցությանն աջակցող կառուցվածքային միավոր, հնարավորություն ունի.

- նպաստել տեղական (մունիցիպալ) մակարդակով Աշակերտական ինքնակառավարման միավորումների (առնվազն՝ համագործակցության) ստեղծմանը,
- լսել ինքնակառավարման միավորմանը,
- տեղեկատվություն տրամադրել համակարգի ընթացիկ բարեփոխումների և փոփոխությունների վերաբերյալ,
- աշակերտների առաջարկները ներկայացնել համապատասխան կառույցներին,
- Աշակերտական ինքնակառավարման միավորմանն օգնել տարբեր կառույցների հետ շփման մեջ,
- մունիցիպալ մակարդակով գոյություն ունեցող Աշակերտական ինքնակառավարման մարմիններին օգնել կապ հաստատել միմյանց հետ,
- նպաստել, որպեսզի մունիցիպալ մակարդակում գործող Աշակերտական ինքնակառավարման մարմինների միավորումը ներկայացնի և պաշտպանի մունիցիպալիտետի աշակերտների շահերը,
- նպաստել, որպեսզի Աշակերտական ինքնակառավարման մարմինները համագործակցեն պետական հաստատությունների հետ,
- նպաստել Աշակերտական ինքնակառավարումների կարողությունների հզորացմանը՝

- ✓ փորձի փոխանակմամբ
- ✓ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտի ընդգծմամբ
- ✓ անհրաժեշտության դեպքում՝ աշակերտների և Աշակերտական ինքնակառավարման մարմինների շահերի պաշտպանությամբ՝ ակտիվ ներգրավվելով ընթացիկ գործընթացներում,

- մունիցիպալ մակարդակով առաջ քաշել/դնել քննարկման կրթության որակի բարձրացման առաջարկներն ու վերահսկել դրանց իրականացումը,
- հոգ տանել աշակերտների ուսումնական միջավայրի բարելավման և սովորելու մոտիվացիայի բարձրացման մասին, պարբերաբար տեղեկատվություն տրամադրել կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների/նորարարությունների վերաբերյալ,
- հոգ տանել աշակերտների ազատ ժամանակի ճիշտ կազմակերպման մասին (ծրագրելով և կազմակերպելով տարբեր հետաքրքիր միջոցառումներ): Նպաստել մունիցիպալիտետի աշակերտների մերձեցմանն ու միմյանց ճանաչմանը,
- նպաստել աշակերտների ներգրավվածությանը մունիցիպալ մակարդակով որոշումների կայացման գործընթացում, բարձրացնել աշակերտների քաղաքացիական գիտակցությունը:
- հնարավոր է այդ իսկ նպատակով Աշակերտական ինքնակառավարման մարմինների հետ միասին, ռեսուրս կենտրոնն իրականացնի ակտիվություններ, մասնավորապես.

  - անցկացնի Աշակերտական ինքնակառավարման միավորումների համաժողովներ՝ լավագույն փորձը/պրակտիկան փոխանակելու նպատակով,
  - ստեղծի սեփական կայքը և/կամ սոցիալական ցանցը՝ տեղեկատվությունը ժամանակին տարածելու նպատակով,
  - բացահայտի աշակերտների խնդիրներն ու աջակցի նրանց խնդիրների լուծման հարցում,
  - մասնակցի կրթական քաղաքականության ձևավորմանը, ներկայացնի առաջարկներ և տեսակետներ՝ քաղաքականության բարելավման վերաբերյալ:

ՕՐԻՆԱԿ 1

«ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ»

Խնդիր. Մարդու իրավունքների պաշտպանության և բռնության դեմ հասակակիցների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, Աշակերտական ինքնակառավարումները պարբերաբար ծրագրեր էին իրականացնում իրենց դպրոցներում, թեև դպրոցներում շարունակվում էին բռնության հաճախակի դեպքերը, հատկապես՝ կիբերբուլլինգը:

Նպատակ. Նպաստել խտրականության նվազեցմանը՝ դպրոցական համայնքի անդամների ուշադրությունը կենտրոնացնելով դեռահասների զարգացման գործընթացում կիբերբուլլինգի վրա:

Ակտիվություններ.

- կրթական ռեսուրս կենտրոնն իբրև դպրոցներում տիրող իրավիճակին առավելագույնս իրազեկ կառույց, ֆասիլիտացիա ցուցաբերեց Աշակերտական ինքնակառավարման համընդհանուր առաջին ժողովին, հանդիպմանը մասնակցում էր Մանդատուրի ծառայության հոգեբանը, ով ողջ ընթացքում ներգրավված էր Աշակերտական ինքնակառավարման մարմնի կողմից ծրագրված ակտիվություններին,
- Աշակերտական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, Մանդատուրի ծառայության հոգեբանի ներգրավմամբ, կիրառեցին օնլայն հարցաշարի տարբերակն ու անանուն հարցում անցկացրին, որի նպատակն էր ուսումնասիրել կիբերբուլլիգի հետ կապված առկա իրավիճակը: Հետաքրքրության շրջանակում ենթադրվում էր բացահայտել, թե ինչպես են աշակերտները դարձել կիբերբուլլինգի զոհ,
- հետազոտության արդյունքների հիման վրա Աշակերտական ինքնակառավարումների միավորումը ստեղծեց ֆեյսբուքյան էջ, որտեղ ծրագրեց և ներկայացրեց կիբերբուլլինգի դեմ տարբեր միջոցառումներ,
- Աշակերտական ինքնակառավարումների միավորումը, Մանդատուրի ծառայության հոգեբանի ներգրավմամբ պատրաստեց օնլայն հաղորդում, որի նպատակն էր բարձրացնել կիբերբուլլիգի մասին հանրային իրազեկվածությունը,
- ռեսուրս կենտրոնը կազմակերպեց պաստառների մրցույթ: Պաստառներում ներկայացված էին այն հույզերն ու զգացողությունները, որոնք վերապրել էին էկրանից այն կողմ գտնվող աշակերտները կիբերբուլլինգի ժամանակ,

- ռեսուրս կենտրոնի աջակցությամբ և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ, Աշակերտական ինքնակառավարման մարմինը պատրաստեց «Կիբերբուլլինգը հանցագործություն է» բանները (վահանակ) և փակցրեց այն մունիցիպալիտետի կենտրոնում,

- ռեսուրս կենտրոնի աջակցությամբ մունիցիպալային մակարդակով համաժողով անցկացվեց, որին մասնակցում են դպրոցի ղեկավարությունն ու ուսուցիչները, հրավիրված մասնագետները, ծնողները և աշակերտները,

- համաժողովին ցուցադրվեցին աշակերտների կողմից ներկայացված պաստառները:

Արդյունք. Ծրագրի իրականացման արդյունքում աշակերտները, ուսուցիչները, ծնողները, դպրոցի ղեկավարությունը և դպրոցական համայնքի անդամները ևս մեկ անգամ խորհեցին ու գիտակցեցին, թե ինչ բացասական հետևանքներ կարող է ունենալ բռնությունը, մասնավորապես՝ առցանց տարածքում, որտեղ գործընթացը պակաս տեսանելի է և, թե ինչպիսին է նրա ազդեցությունը դեռահասների հոգեբանական վիճակի վրա:

ՕՐԻՆԱԿ 2

«ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿԻՑ»

Խնդիր. Կրթության բարեփոխումների շրջանակներում դպրոցներում անցկացված անհրաժեշտությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ արտադասարանային ակտիվությունները կարևոր են աշակերտների համար: Առանձին դպրոցներ կարող են ապահովել դրանք սահմանափակ ծավալով, ուստի առավել մեծ ակտիվությունների ապահովումը մեծ մարտահրավեր է հանդիսանում նման դպրոցների համար:

Նպատակ. Աշակերտական ինքնակառավարումների միջև համագործակցության հզորացում և նյութական միջոցների համատեղ հայթայթում:

Ակտիվություններ. Կրթական ռեսուրս կենտրոնի կողմից դպրոցներում առկա կարիքներին ծանոթանալուց հետո, կենտրոնը համոզվեց, որ բազմաթիվ խնդիրներ կլուծվեն տարբեր դպրոցների Աշակերտական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ծրագրերի իրականացման շնորհիվ:

- ռեսուրս կենտրոնը հրավիրեց դպրոցների ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին,

- ինքնակառավարումները ռեսուրս կենտրոնի օգնությամբ ձևավորեցին միասնական նախաձեռնություններ,

- ռեսուրս կենտրոնի աջակցությամբ ընթացք տրվեց տարբեր մակարդակներով շփումների՝ ինչպես տեղական ինքնակառավարման մարմնի, այնպես էլ՝ միջազգային կազմակերպությունների միջև,

- Աշակերտական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները միասին աշխատեցին և տեղական իշխանություններին ներկայացրին նախագիծ, որը նախատեսում է դպրոցների, տեղական ինքնակառավարման մարմինների և ֆինանսավորող կազմակերպությունների/դոնորների համագործակցությունը՝ աշակերտների կարևոր կարիքները հոգալու համար:

Ակտիվություններ.

- Աշակերտական ինքնակառավարման ներկայացրած նախագծի համաձայն, տեղական ինքնակառավարումը հատկացրեց պետական սեփականություն հանդիսացող տարածք,

- Աշակերտական ինքնակառավարումների միավորումը նույն նախագծով շահեց դրամաշնորհ, որի շրջանակներում հատկացված վայրում ստեղծվեց բացօթյա տարածք՝ ճանաչողական ակտիվությունների համար: Տեղում տեղադրվեցին սարքավորումներ, տարածքը համալրվեց տարբեր անհրաժեշտ ռեսուրսներով,

- Աշակերտական ինքնակառավարումների միավորումը համագործակցություն սկսեց տեղական իշխանությունների հետ: